Արձանագրություն 4

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.11.2018թ. ժամը 15:50-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Մ. Սարգսյան - ՀՀ ՖՆ գործերի կառավարման վարչության պետ

Անդամներ

Է. Պողոսյան – ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկման բաժնի պետ-վարչության պետի տեղակալ

Ա. Մարտիրոսյան - ՀՀ ՖՆ ԳԿՎ վարչատնտեսական բաժնի պետ

Հ. Ղազարյան - ՀՀ ՖՆ ԳԿՎ վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՀՀ ՖՆ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություններ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցման և որակավորման փաստաթղթերի վերաբերյալ

1. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի եզրակացության համաձայն՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալները չեն համապատասխանել իրականությանը՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի իր ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություններ՝ մասնակիցը ներկայացրել է 107000.004 ՀՀ դրամի գնային առաջարկ, միևնույն ժամանակ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ 31000 ՀՀ դրամի չափով):

2. «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի անվանումն ու տեխնիկական բնութագրերը ընդունելի չեն և չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշված չէ ապրանքի գործարանային փաթեթավորման առկայության մասին, մինչդեռ վերջինս պահանջված է ըստ հրավերի:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

2. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել 2-րդ չափաբաժնի մասով «ԼԵԴ ՊՌՈ» ՍՊԸ-ին:
3. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:
4. Հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «ԼԵԴ ՊՌՈ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ԷԱՃԱՊՁԲ-18/9» ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել որակավորման փաստաթղթերի ներկայացման և եզրակացության ներկայացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Սարգսյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Է. Պողոսյան

_____ Ա. Մարտիրոսյան

_____ Հ. Ղազարյան

Գնումները համակարգող ՝ _____ Ա. Աղաբաբյան